



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

75247

1900  
321  
n-75

151

~~629~~  
95

26 SEP 2006  
№ 17 JAN 2010

321  
4-75

uy

ՎԱՍԻԼԻՅ ԳՕԼՈՒԲԵՎ

300  
7-68

Ի Ն Չ Է

ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

1901

1901

Ռ. ԹՄՐԳԺ. Լ. ՂՈՐՂԱՆԵԱՆ

## ԻՆՉ Է ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՆԸ:

Իւրաքանչիւր պետութեան մէջ կայ իշխանութիւն, որի անունից օրէնքներ են հրատարակուում և որի անունով երկիրը կառավարուում է: Այդպիսի իշխանութիւնը, միւս, իրեն ենթարկւած և իրենից իրաւունք ստացող իշխանութիւններից տարբերելու համար կոչուում է բարձրագոյն իշխանութիւն. միւս բոլոր իշխանութիւնները բարձրագոյն իշխանութեան օրգաններն են. դոքա երկրորդական, ստորագրեալ են. դոքա բարձրագոյն իշխանութեան հրամանները կատարող են:

Բոլոր, պետութեան սահմաններում ապրող, և ոչ օտարահպատակ անձինք, պարտաւոր են հնչազանդւել բարձրագոյն իշխանութեան և կատարել նրա բոլոր հրամանները, որոնք օրինական ճանապարհով, իբրև օրէնք հրատարակւած են: Բարձրագոյն իշխանութեան և պետութեան ազգաբնակչութեան մինչև եղած կապը այդ է: Այդ կապը մի քանի պետութիւններում կոչուում է հպատակութիւն, միւսներում՝ քաղաքացիութիւն: Իսկապէս քաղաքացիութիւնը նոյն հպատակութիւնն է, միայն ոչ թէ անհատին այլ պետութեանը:

Այն պետութիւններում, ուր բարձրագոյն իշխանութիւնը պատկանում է ժողովրդին, գտնուում է ժողովրդի ձեռքին, այնտեղ գոյութիւն ունի ժողովրդապետութիւն, — ժողովրդի իշխանութիւն: Հետևապէս ժողովրդապետութիւն ասելով պիտի հասկանալ՝ բարձրագոյն իշխանութիւնը ժողովրդին պատկանելը: Ժողո-

12138-52

վուրդը ինքնք է օրէն հրատարակում և երկիրը կառավարում: Ժողովրդի անունով է օրէնք հրատարակում և երկիրը կառավարում: Հետևապէս բոլոր գոյութիւն ունեցող իշխանութիւնները, որոնք օրէնք են հրատարակում և կառավարում են երկիրը—ժողովրդի կամքն են կատարում, նորա լիազօրութեամբ են դործում:

Ահա թէ ի՞նչ է ժողովրդապետութիւնը: Գործնականում ժողովրդապետութիւնը կարող է տարբեր կերպով ձևակերպել. և իրօք այդպէս էլ լինում է:

Բարձրագոյն իշխանութիւնը, ամբողջապէս անբաժան կերպով կարող է պատկանել ժողովրդին: Ժողովուրդը միայնակ է երկիրը կառավարում, իրեն իշխանութիւննից ոչ ոքի մաս չտալով, և ամբողջ իշխանութիւնը իրեն ձեռքին է: Այդ նշանակում է երկրի մէջ գոյութիւն ունի զուտ ժողովրդապետութիւն, ժողովրդապետութիւն լայն մտով:

Զուտ ժողովրդապետութիւնն էլ իւր կարգին երկն տեսակ է լինում: Նա կարող է լինել անմիջական և միջնորդական: Անմիջական ժողովրդապետութիւն, այն դէպքում կլինի, երբ անխտիր, ամբողջ ժողովուրդը (իհարկէ չափահաս և հոգեպէս առողջ) երկիրը կառավարելու գործում մասնակցութիւն ունի: Այդպիսի ժողովրդապետութիւն գոյութիւն ունի այժմս Զւիցերիայի մի քանի կանտոններում\*): Այնտեղ ընդհանրապէս գարնանը, ժողովրդից բոլոր չափահաս մարդիկ բացօդեայ ժողովում են և պետական հարցերը լուծում: Միայն ընթացիք գործերը և ընթացիք օրէնսդրութիւնը և երկրի կառավարութիւնը ինքը ժողովուրդը չի վարում, այլ նրա կողմից ընտրւած փոքրաթիւ լիազօրների ժողովը: Այդ կատարում է գոր-

\*) Уаіііоіі—Զուիցերական դաշնակցութեան իւրաքանչիւր պետութիւնն է: Ծ. Թ.

ծի ղերութեան համար: Քիչ մարդիկ հեշտութեամբ կարող են մինչև իսկ ամեն օր ժողովել և որովհետև նորա ընտրւում են որոշեալ ժամանակով, կարող են անձնական գործերը թողնել և զբաղել հասարակական գործերով: Իսկ ամբողջ ժողովուրդը, չի կարող թողնել իւր անձնական գործերը և յաճախ ժողովել և իւր գրեթէ ամբողջ ժամանակը և աշխատութիւնը նւիրել հասարակական գործերին: Մինչև իսկ տարեկան մի կամ երկու անգամ ժողովելն էլ հնարաւոր է միայն փոքր պետութիւններում: Թւով փոքր ժողովրդի համար համեմատաբար աւելի հեշտ է ժողովել և ժողովելու համար տեղ գտնել: Զուիցերական կանտոնները շատ փոքրիկ պետութիւններ են, մեր փոքր նահանգների նման. այդ պատճառով նոցա համար դժուար չէ մի որոշ տեղ միասին ժողովել:

Իսկ այն պետութիւններում, ուր բնակիչների թիւը հասնում է տասնեակ մինչև իսկ հարիւր միլիոնների, ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ոչ մի հնարաւորութիւն չկայ այդպիսի համաժողովրդական գումարումներ կազմել: Հարկաւոր կլինի մասերի բաժանել: Պարզ է, որ այդպիսի տեղերում ժողովուրդը չի կարող անմիջական կերպով իւր բարձրագոյն իշխանութիւնը ի կատար ածել, և անմիջական կերպով երկիրը կառավարել:

Այդ անյարմարութիւնը վաղուց էր նկատւած, և հէնց այն ժամանակ այդ անելանելի դրութիւնից ելք գտան: Եթէ անխտիր ամբողջ ժողովուրդը չի կարող երկիրը կառավարել, կարող է իրեն միջից ընտրել լիազօրների այնպիսի մի թիւ, որոնք առանց մի դժուարութեան կարող կլինեն ժողովել և երկիրը կառավարել: Գործի էութիւնը դորանից չի փոխւի: Բարձրագոյն իշխանութիւնը կրկին ժողովրդինը կլինի, նորան կպատկանի, միայն թէ բարձրագոյն իրաւունք-

ները ի կատար կարծւեն ոչ թէ ամբողջ ժողովրդի ձեռքով, այլ նորա միայն մի մասի—ներկայացուցիչներ ձեռքով: Իսկ ժողովրդի կողմից ընտրւած ներկայացուցիչները նոյն ժողովուրդն են ներկայացնում: Ժողովրդապետութիւնը կրկին ժողովրդապետութիւն է մնում, միայն անմիջական ձևից փոխուում է միջնորդականի, որը և կոչուում է ժողովրդական ներկայացուցչութիւն: Ահա ի՞նչ է երկրորդ ձևի՝—միջնորդական ժողովրդապետութիւնը:

Ներկայումս գուտ և անմիջական ժողովրդապետութիւն գոյութիւն ունի միայն Զւիցիերայի 4 կանտոններում: Միւս բոլոր պետութիւններում կայ ժողովրդական ներկայացուցչութիւն:

Ժողովրդապետութիւնը իսկապէս գուտ, անբաժան ձևով գոյութիւն ունի հանրապետութեան մէջ. (Փրանսիայում, Հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգներում և այլն): Այդտեղ բարձրագոյն իշխանութիւնը ավբողջապէս պահպանում է ժողովրդին: Թէպէտ հանրապետութիւնը ունի իրեն մեծը—նախագահը, բայց դա բոլորովին չի խախտում ժողովրդական սկզբունքի գուտ ձևը: Նախագահի պաշտօնը մեզ չպիտի շփոթեցնի: Դա օգոստոսփառ կայսր չէ, ինչպիսին կայ ինքնակալ—միապետական երկրներում և մինչև իսկ սամանագրական պետութիւններում: Նա նոյնպիսի «հասարակ մահկանացու» է, ինչպէս հանրապետութեան միւս բոլոր անդամները: Նա ժողովրդի գաւակ է, որի միջից և որի կողմից ընտրւած է իւր բարձր պաշտօնի համար: Նախագահ լինելով, նա, իբրև պետութեան գլուխ, իսկապէս որ, բացառիկ յարգանք է վայելում, պահպանուում է նորա պատիւը և անձը, և իւր նախագահութեան ընթացքում ոչ ոքի առաջ պատասխանատու չէ: Բայց նա ընտրւած է որոշ ժամանակով, որը անհրաժեշտ է նորա պետութեան համար: Նախագահի պաշտօնը նախագահի պաշտօնը չէ, այլ ժողովրդի ներկայացուցիչների հետ և հիմնական օրէնքների համաձայն, որոնցից մի նշանակեց անգամ չի կարող շեղւել:

Թեան սովորական քաղաքացի և վերջիններիս մէջն է մտնում: Այն ժամանակ նա պետութեան բոլոր անդամներին վիճակակից է դառնում, կարող է իւր վարձուներին համար դատի ենթարկել և իւր բոլոր արածների համար միւսների պէս պատասխանատու է: Այն ժամանակ նա կարող է նախագահութեան ժամանակ կատարած գործերի պատասխանը տալ: Այսպէս ուրեմն հանրապետութեան մէջ պետութեան գլուխ—նախագահը բարձր պաշտօնը ժամանակաւոր է ստանձնում (4—6 տարի) և երկրորդ՝ վերջ ի վերջոյ իւր արածի համար պատասխանատու է ժողովրդի առաջ: Ծնործիւ այդ բանի, նախագահի իւրաքանչիւր նոր ընտրութեան ժամանակ բարձրագոյն իշխանութիւնը, այսպէս ասած, վերադառնում է ժողովրդին իսկ նախագահը իշխանութիւնը ստանձնելով մնում է դարձեալ պատասխանատու իւր գործերի համար: Եթէ իրաւաբանական տեսակետից նախագահի պատասխանատուութիւնը ժողովրդի առաջ միշտ հնարաւոր չէ և դժուար է, սակայն բարոյական պատասխանատուութիւնը միշտ հնարաւոր է: Եթէ մէկի նախագահութեան ժամանակ ժողովուրդը նորանից դժգոհ էր, նորան ի հարկէ միւս անգամ նախագահ չեն ընտրի: Հասարակական կարծիքը նորան խիստ կերպով կգատապարտի և նա համաքաղաքացիների մէջ վերադառնալով, իբրև վարձատրութիւն ստացած կլինի վատ հրոչակ:

Բացի դորանից, նախագահը միայնակ չէ երկիրը կառավարում, այլ ժողովրդի ներկայացուցիչների հետ և հիմնական օրէնքների համաձայն, որոնցից մի նշանակեց անգամ չի կարող շեղւել:

Ահա ինչու հանրապետութեան մէջ, թէպէտ կայ «միապետ»—յանձին նախագահի, սակայն ժողովրդապետութիւնը ամբողջապէս իրականացած է: Ինչ-

պէս տեսնում ենք, բարձրագոյն իշխանութիւնը ժողովրդի ձեռքից գուրս չէ գնում բոլորովին. ժողովուրդը իսկապէս ամբողջ ժամանակ ինքն է իր բաղոյթ կարգադրողը:

Ժողովրդապետութիւնը բացի այդպէս լրիւ իրականանալուց, որպիսին տեսնում ենք հանրապետութեանց մէջ, կարող է և մասամբ բաժանւած ձևով իրականանալ: Այդպիսի ձևով ժողովրդապետութիւն գոյութիւն ունի այսպէս կոչւած սահմանադրական պետութիւններում (Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում և այլն.):

Սահմանադրական երկրներում ժողովրդը բարձրագոյն իշխանութիւնը բաժանում է միապետի հետ: (Կայսրի, թագաւորի, իշխանի): Սահմանադրական պետութիւններում, բարձրագոյն իշխանութիւնը երկու իշխանութիւններից է կազմւած—միապետի և ժողովրդական ներկայացուցիչների: Դոքա երկուսը միասին միայն կազմում են պետութեան բարձրագոյն իշխանութիւն: Մէկը առանց միւսի բարձրագոյն ոյժ չունի: Դորանումն է սահմանադրական միապետութեանց մէջ եղած ժողովրդապետութեան խոր իմաստը և նշանակութիւնը:

Ընդհանրապէս սահմանադրական երկրներում կառավարութեան իւրաքանչիւր օրէնքն ու կարգադրութիւնը այն գէպքում է միայն իսկական և ժողովրդի համար պարտաւորիչ, երբ երկու իշխանութեանց կողմից էլ հաստատուած է — թագաւորի և ժողովրդական ներկայացուցիչների կողմից: Ինչպէս թագաւորը առանց ժողովրդական ներկայացուցիչների չի կարող օրէնք հրատարակել, այնպէս էլ ընդհակառակը ժողովրդի ներկայացուցիչները առանց կայսեր չեն կարող օրէնք հրատարակել. այնպիսի օրէնքը ոչ ոքի համար պարտաւորիչ չէ:

Բայց բոլորովին տարբեր բաներ են սահմանադրական պետութիւնների միապետի ու ժողովրդի ներկայացուցիչների և հանրապետութեան նախագահի ու ժողովրդական ներկայացուցիչների դերերը: Նախագահի դերը մեզ յայտնի է: Հանրապետութեան մէջ, ինչպէս տեսանք, իշխանութիւնը ժողովրդի ու «միապետի», այսինքն՝ նախագահի մինչև չի բաժանւած: Ժողովուրդը ինքն է բարձրագոյն իշխանութիւնը տալիս նախագահին, նորա հետ միասին կառավարում է երկիրը և հարկաւոր դէպքում զրկում է նրան իշխանութիւնից և դատի է ենթարկում: Բոլորովին այլ է սահմանադրական միապետութեանց մէջ:

Այստեղ ժողովրդի ներկայացուցիչները այլ իրաւունքների տէր են, միապետը այլ: Միապետը իշխանութիւնը ունի ոչ թէ ժողովրդից, այլ նա թագաւորում է «կամօքն Աստուծոյ» այսինքն նորա իշխանութիւնը Աստուծոց ստացուած է համարուում: Ի նշան այդ բանի կատարում է թագադրութիւն և օծումն:

Ժողովրդական ներկայացուցիչները իրենց իշխանութիւնը ստանում են ժողովրդից, նորա կամքով և լիազօրութեամբ են գործում: Եւ մինչդեռ հանրապետութեանց մէջ ժողովուրդն է պետութեան մեծին—նախագահին բարձրագոյն իշխանութիւն տալիս, սահմանադրական պետութիւններում ընդհակառակը միապետն է բարձրագոյն իշխանութիւնից բաժին տալիս ժողովրդին: Եթէ այդ իրաւունքը յեղափոխութեամբ չէ ձեռք բերած, սովորաբար միապետն է տալիս ժողովրդին: Որ ամենից նշանաւորն է, ժողովրդական ներկայացուցիչների իշխանութիւնը չի տարածւում միապետի, պետութեան մեծի վերայ էլ, ինչպէս այդ լինում է հանրապետութեանց մէջ: Միապետը Աստուծոց ստանալով իշխանութիւն, կարող է զրկուել իշխանութիւնից միայն Աստուծոյ ձեռքով: Աստուած



կարող է նրան իշխանութիւնից զրկել զրկելով նորան խելքից կամ կեանքից — երբ միապետը հոգեպէս հիւսնալ, կանաւարելու անընդունակ կլինի, կամ կմեռնի: Նրան հեռացնելու ուրիշ օրինաւոր ճանապարհ չկայ: Իբրև «Աստծոյ ընտրեալ» միապետը անսխալական է համարուում, այդ պատճառով էլ պատասխանատու չէ իր արածները համար: Նորան ոչ մի կերպ չի կարելի պատասխանատուութեան ենթարկել: Նորա համար մի պատասխանատուութիւն կայ — հետեորդների դատատանը: Նորա տեղ պատասխանատու են նախարարները, որոնց և ժողովուրդը յանցանքի պատճառով պատասխանատուութեան է ենթարկուում:

Բայց սահմանադրական միապետութիւններում գոյութիւն ունի սահմանադրութիւն, այսինքն կայ երկրի համար հիմնական օրէնագիրք, որը պարտաւորի է բոլորի համար, ի թիւս որոց և միապետի համար: Սահմանադրութեան շնորհիւ երկրի մէջ ամեն բան օրէնքով է կատարուում և կառավարութեան ոչ մի ապօրինի վարմունքը անպատիժ չի մնում: Ժողովրդական ներկայացուցիչները հսկում են, որ սահմանադրութիւնը ճիշտ կերպով կատարւի և պատասխանատուութեան են ենթարկուում օրէնքի առաջ սահմանադրութիւնը խախտողներին, բոլորին մինչև իսկ միապետական կառավարութեան անդամներին: Սահմանադրական միապետութեանց մէջ կեանքը ընթանում է օրէնքի համաձայն, և հէնց դա է կազմում ժողովրդապետութեան գնահատելի առաւելութիւնը:

Ձանազան սահմանադրական պետութիւններում ժողովրդի ներկայացուցիչների մասնակցութեան աստիճանը տարբեր է: Մի քանիստում շատ չափով է, միւսներում քիչ: Ուրեմն մի քանի պետութիւններում ժողովրդապետութեան սկզբունքները աւելի շատ, աւելի լրիւ են իրականացել, միւսներում քիչ:

Ռուսաստանում երկիրը կառավարում է միապետը, որը ինքնակալ և անսահմանափակ է: Նորա անունով են հրատարակուում բոլոր օրէնքները: Ռուսաստանում կայսերն է պատկանում ամբողջապէս բարձրագոյն իշխանութիւնը: Նա բարձրագոյն իշխանութիւնից ժողովրդին բաժին չէ տալիս, այդ պատճառով էլ կոչուում է անսահման միապետ: Ըստ եկեղեցու ուսաց կայսրը թագաւորում է «Կամօքն Աստուծոյ», այսինքն, նա իւր իշխանութիւնը ստացել է Աստուծուց և ոչ թէ ժողովրդից, որի համար և նա գահ բարձրանալիս թագադրուում է և օճուում: Այդ պատճառով նա անսխալական է համարուում և պատասխանատու չէ իր արածների համար: Ժողովուրդը բարձրանալու չէ իր արածների համար: Ժողովուրդը բարձրագոյն իշխանութեան մէջ ոչ մի մասնակցութիւն չունի:

Կառավարութեան այդ ձևը մտցրած է Ռուսաստանում XVI դարում և վերջնականապէս հաստատուած XVII-ում: Առաջ կառավարութեան այլ ձև կար: Առաջ Ռուսաստանում նոյնպէս ժողովրդապետութիւն էր, այն էլ լրիւ ձևով: Ամբողջ բարձրագոյն իշխանութիւնը պատկանում էր ժողովրդին: Նա գործադրում էր իշխանութիւնը անմիջական կերպով: Այդ տեսակ էր Ռուսաց պետութեան հին — Կիևեան ժամանակաշրջանում: Այն ժամանակ ժողովուրդը ինքն էր երկիրը կառավարում և օրէնքներ հրատարակում: Ընդհանրապէս բոլոր չափահաս այր մարդիկ ժողովուում էին բացօդեայ, քաղաքային հրապարակի վերայ և այնտեղ վճռում էին բոլոր հարցերը: Այդպիսի ժողովրդական գումարումները կոչուում էին վէչէ (Вече) և այն ժամանակ գոյութիւն ունէին Ռուսաստանի բոլոր շրջաններում: Աւելի լայն զարգացում ստացաւ վէչէն Նովգորոդում և Պսկովում, ուր իր գոյութիւնը շարունակեց մինչև XVI դարը: Միւս շրջաններում վէչէները աւելի շուտ վերջացան (XIII—XIV դա-

բերում): Վէչչներում ժողովուրդը որոշում էր պատերազմի և խաղաղութեան հարցերը, օրէնքների և ընթացիկ կառավարութեան համար պաշտօնական անձինք ընտրելու խնդիրները: Իշխանը (КНЯЗЬ) բարձրագոյն իշխանութեան իրաւունքները ունէր, բայց նա այդ իշխանութեան միակ ներկայացուցիչը չէր, մինչև իսկ նորանից մաս էլ չունէր, ինչպէս այժմս. սահմանադրական միապետը այլ միայն ստանում էր ժողովրդից բարձրագոյն իշխանութեան որոշ իրաւունքներ: Բարձրագոյն իշխանութեան իսկական տէրը մնում էր կրկին ժողովուրդը որը ընտրելով իրեն համար իշխան, շարունակում էր Վէչչի միջոցով գործադրել իր բարձրագոյն իշխանութիւնը Վէչչն յաճախ էր գումարում, և ինչպէս ասեցինք, վճռում էր ամեն տեսակ ընթացիկ հարցեր. իսկ իշխանը և իւր օգնականները իսկապէս ասած ժողովրդի կամքը, նորա ժողովի որոշումները, կատարողներ էին: Գահ բարձրանալիս, կամ ինչպէս այն ժամանակ էին ասում, սեղան նստելիս, իշխանը համբուրում էր խաչը և երգում էր ժողովրդին՝ ընդունւած սովորութիւնների և օրէնքների համաձայն արդարութեամբ կառավարել: Նովգորոգում մինչև իսկ ժողովուրդը պայման էր կապում ընտրւած իշխանի հետ:

Պայմանագրի մէջ յիշուած էին լինում իշխանի բոլոր իրաւունքները և պարտաւորութիւնները. և իշխանը, ի նշան նորա, որ այդ բոլորը սրբութեամբ պիտի կատարի, ստորագրում էր պայմանագիրը: Պայմանը խախտելու դէպքում իշխանը զրկւում էր իրաւունքներից և շատ անգամ մինչև իսկ գահից: Ժողովրդի իրաւունքները խախտողին զրկում էին գահից կամ, ինչպէս այն ժամանակ էին ասում, վճռում էին, «ճանապարհ էին» ցոյց տալիս: Ժողովուրդը իրեն իրաւունք համարելով իշխան ընտրելը, իրաւունք

էր համարում նոյնպէս վճռել նրան և յաճախ այդ իրաւունքից օգտւում էլ էր: Իշխան ընտրելով, ժողովուրդը նրան անուշադիւր չէր թողնում, այլ արթուն կերպով հսկում էր նորա վերայ և հարկաւոր դէպքում գահագուրկ անում: Այդ պիտով կիւեան ժամանակաշրջանում բարձրագոյն իշխանութիւնը ամբողջապէս պատկանում էր ժողովրդին, որը անմիջական կերպով օգտւում էր նրանից: Իշխանը ընտրւում և ստանում էր իր իշխանութիւնը ժողովրդից, կառավարում էր երկիրը ժողովրդի տւած լիազօրութեամբ, բայց միևնոյն ժամանակ ժողովրդի հետ — Վէչչի օգնութեամբ, որը չնայած իշխանի գոյութեանը, միշտ գործում էր: Իշխանը իր կառավարչական գործունէութեան ժամանակ միշտ հետամուտ էր լինում պայմանագրին, ժողովրդական վէչչի հրակոչութեան տակ էր գտնւում և իր սխալների ու զեղծումների համար ժողովրդական դատի էր ենթարկւում և երբեմն իշխանութիւնից ու գահից զրկւում:

Կիւեան ժամանակաշրջանի հին — Ռուսական իշխանը շատ յիշեցնում է ժամանակակից հանրապետութեան նախագահին: Նա նոյնպէս ինչպէս նախագահը, ընտրւում էր, թէպէտ ոչ որոշ ժամանակով. բայց յաճախ ընտրուածը ցմահ չէր մնում, որով հետև պատասխանատու էր ժողովրդի առաջ, նա դատաստանին էր ենթարկւում և զրկւում իշխանութիւնից:

Մոսկովեան ժամանակաշրջանում իրերի դրութիւնը փոխուեց: Ռուսաստանը միացնող Մոսկւայի իշխանները իրենց հետ բերեցին նոր հասկացողութիւններ և նոր սկզբունքներ, որոնց վերայ և հիմնեցին նոր քաղաքականութիւն, կառավարութեան նոր ձև: Մոսկւայի իշխանները գահ էին բարձրանում ոչ թէ ժողովրդի ընտրութեամբ, այլ սկզբում, քանի դեռ թաթարական իշխանութեանն էին ենթարկուած, — խա-

նի կամքով, իսկ յետոյ սկսկեցին որդոց որդի—ժառանգաբար գահ բարձրանալ:

Ժողովրդական վէչէն վաղուց վերացել էր թաթարական իշխանութեան ժամանակ, երբ խանը Ռուսաստանի միակ տէրն էր, ժողովուրդը երկրի կառավարութեան մէջ գործ ունենալուց յետ էր սովրել և բոլորովին մեկուսացել էր: Իսկ երբ երկիրը ազատւեց թաթարական լծից, իշխանները հպարտացած, որ իրենք երկրի ազատիչներ հանդիսացան, բոլորովին չմտածեցին ժողովրդի իրաւունքների մասին: Ընդհակառակը իրենց համար անյարմար և անսխորժ ժողովրդապետութեան վերջին յետքերը աշխատեցին ոչընչացնել: Նոքա բարձրագոյն իշխանութիւնը ամբողջապէս խանից ստացան և նմանելով նան, չկամեցան կառավարութեան գործին մասնակցութեան կոչել և ժողովրդին: Մեծ իշխանի տեղ, Մոսկւայի իշխանը իրեն ամբողջ Ռուսաստանի ինքնակալ, «Աստուծոյ կամքով» և ոչ ժողովրդից ընտրուած թագաւոր կոչեց և հանդիսաւոր կերպով թագադրեց:

Ժողովրդին այլ ևս նա չէր երգւում, ինչպէս հին ռուսաց իշխանները, այլ ընդհակառակը սկսեց նրանից խոնարհ հպատակութեան երգում առնել: Քրիստոնէութիւնը ընդունելոց Յունաստանից եկած հոգևորականութիւնը Ռուսաստան մտցրեց ընդհանրապէս իշխանութեան մասին և մասնաւորապէս թագաւորական իշխանութիւն մասին յունական ուսմունքը: Հոգևորականութիւնը սկսեց սովորեցնել, որ «բոլոր իշխանութիւնները Աստուծուց են դրուած» և որ «բոլոր իշխանութիւնները Աստուած է հաստատել», այդ պատճառով էլ «ով հակառակում է իշխանութեան— հակառակում է Աստուծուն»: «Աստուծոց վախեցէք, թագաւորին պատուեցէք», մինչև իսկ վատին, որովհետև մարդկանց մեղքի համար է Աստուած վատ թա-

գաւոր ուղարկում և այլն: Մոսկուայի իշխաններին այդ ուսմունքը շատ դուր եկաւ, նոքա այդ ընդունեցին և իրենց ընտրեալներից նոքա շատ շուտ դառան ինքնակալ թագաւոր կամօքն Աստուծոյ, իսկ ժողովուրդի վերայ սկսեցին նայել իբրև «իրենց համար աշխատողներին», Իօան Գրոզնիի խօսքերով, նայել իբրև իրանց ստրուկների վերայ:

Սակայն XVII դարու սկզբին Մոսկւայի Բիւրիկեան-իշխանների հարստութեանը դժբախտութիւն պատահեց: Մեռաւ վերջին թագաւորը, չթողնելով արու գաւակ ժառանգ և այդպիսով Բիւրիկեան տոհմը վերջացաւ: Թագաւոր չկար և բարձրագոյն իշխանութիւնը անցաւ կրկին ժողովրդին: Ժողովուրդը կրկին հանդէս եկաւ և մեռած ժողովրդապետութիւնը ծաղկեց: Բայց ժողովուրդը անմիջապէս բարձրագոյն իշխանութիւնը յանձնեց իւր ընտրեալին: Այդ ձևով թագաւոր էին ընտրուած հետզհետէ—Գօղունովը, Շուսկին և վերջապէս Ռոմանովները: Թագաւոր ընտրելով, ժողովուրդը ինքը գործից չէր հեռանում: Նա շարունակում էր իւր ընտրեալին կառավարութեան գործում օգնել: Այդպիսի օգնութեան աւելի կարիք ունէր երիտասարդ, անփորձ Միխայիլ Ռոմանովը, որը պետութեան քայքայւած ժամանակ գահ բարձրացաւ, այդ պատճառով էլ նորա թագաւորութեան առաջին տարիներում կառավարելու գործում միշտ մասնակցութիւն էր ունենում և ժողովուրդը: Այս անգամ յարութիւն առած ժողովրդապետութիւնը այլ կերպարանք ստացաւ: Ռուսաստանը՝ միացել և լայնածաւալ էր դարձել, այնպէս որ բոլորին միասին մի տեղ ժողովել անհնարին էր: Այդ պատճառով սկսեցին ներկայացուցիչներ ընտրել և ուղարկել Մոսկւա խորհրդին մասնակցելու, այսինքն ժողովրդապետութիւնը ստացաւ ժողովրդական ներկայացուցչութեան ձև: Նոր

ժողովրդական գումարումները գեմսուային ժողով անու-  
նը ստացան:

Այդպիսով գեմսուային ժողովները ժողովրդական  
ներկայացուցիչների անուանումն փորձն էին Ռուսաստանում:  
Առաջին ժողովը XVI դարումն էր, բայց շատ անկա-  
տար ձևով: Սակայն այդ փորձը շատ համեստ է և  
հեռու այն ժողովրդական ներկայացուցչութիւնից, որի  
մասին մենք վերևը յիշեցինք: Կառավարութեան մէջ  
ժողովրդի մասնակցութիւնը սահմանափակում էր  
միայն թագաւորին տուած խորհուրդներով: Բարձրա-  
գոյն իշխանութիւնը թագաւորի և ժողովրդի մէջ չէր  
բաժանուած և թագաւորը յանձին գեմսուային ժողովի  
անդամների լսում էր Ռուսաստանի ժողովրդի ձայնը  
և երբեմն միայն նորա ասածը կատարում էր: Փոր-  
ձեցին, Րիւրիկի տոնմը վերջանալուց յետոյ, նրանով  
պայմանաւորուել նոր ընտրած թագաւորի հետ, որ  
բարձրագոյն իշխանութեան մէջ ժողովուրդն էլ մաս-  
նակցութիւն ունենայ, բայց չյաջողեց: Զեմսուային  
ժողովը խորհրդատու դերից հեռու չգնաց: Իսկ երբ  
թագաւորները իրենց իշխանութիւնը ամուր հաստա-  
տեցին և ներքին խռովութիւնները խաղաղացրին, ժո-  
ղովուրդը խորհրդատուութեան իրաւունքն էլ կորցրեց:  
Զեմսկի ժողովներ այլ ևս չկազմուեցին, ժողովրդին  
այլ ևս չէին լսում, նորա մասին բոլորովին մոռացան  
և կարճ ժամանակ իր բաղի տէրը դարձրած ժողո-  
վրդին շատ շուտով դարձրին բարձրագոյն իշխանու-  
թեան խոնարհ ծառան XVII դարու կիսին:

*[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]*

||

||

« Ազգային գրադարան »  
  
NL0199958

